ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆԸ ԿԱՆՉՈՒՄ Է

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՐՑԱԽ ԱՇԽԱՐՀԻ ՆԵՐԿԱՅԻ ԵՎ ԱՊԱԳԱՅԻ ՄԱՍԻՆ

Անցած տարվա աշնան վերջին օրերին էր։ Անձնական գործով Երևան էի գնացել։ Բարեկամիս տանն էի մնում։ Ուշ երեկոյան հեռախոսը զանգեց։ Ինձ էին ուզում։

— Վաղը հրավիրում եմ մեր տուն։

Զանգողը ուսանողական տարիների իմ ընկերներից էր՝ Գևորգը։

Գևորգը մեր կողմերից է։ Ինստիտուտը ավարտելուց հետո մնաց Երևանում, աշխատեց տարբեր բնագավառներում, հետո դասավորվեց առևտրական ցանցում։ Կառուցեց երկհարկանի սեփական տուն՝ իր բոլոր հարմարություններով։

...Սեղանի շուրջ նստած էին մոտ տասը մարդ, բոլորն էլ՝ ղարաբաղցիներ։ Նրանցից շատերին վաղուց էի ճանաչում։ Տարիներ առաջ աշխատում էին Ղարաբաղում, որը ուսուցիչ էր, որը՝ բժիշկ...

Մթնոլորտը ջերմ էր, ընկերական։ Բոլորն էլ ինձ էին ուզում լսել։

Խոսեցի Ղարաբաղի այսօրվա ծանր կացության մասին, երիտասարդության հոսունության, մեր գյուղերի քայքայման, ավերման մասին։ Միայն վերջին 15 տարում 46 գյուղ է դատարկվել և դեռ այդքան էլ վտանգի տակ է։ Այդ գյուղերը որպես բնակավայր ջնջվել են Ղարաբաղի քարտեզից, իսկ անունները մնացել են որպես ծանր հուշ, պատմություն։ 216 հայկական դպրոցներից մնացել է ընդամենը 129 դպրոց, վերացել է «զուգահեռ դասարաններ» տերմինը, գյուղական շատ դպրոցների ամեն մի դասարանում 5—6 երեխա է սովորում։ 1970 թվականի համեմատությամբ մարզի դպրոցականների թիվը նվազել է 13 հազարով։ Միայն Հադրութի շրջանում, որը Ղարաբաղի ամենախիտ բնակեցված շրջանն էր, այսօր 42 հազար բնակչից մնացել է ընդամենը 14 հազար մարդ, այն էլ՝ հիմնականում տարիքն առած մարդիկ։ Շրջանի հայկական դպրոցներում սովորում են ընդամենը 1700 երեխաներ, իսկ 9—10-րդ դասարաններում սովորող աշակերտների թիվը 300-ի չի հասնում։ Մարզի շատ գյուղերում հարսանիքը և ծնունդը դարձել են երևույթ։ Երիտասարդ բնակիչներին մատների վրա կարելի է հաշվել։

— Դե ասա քանդում եք էլի՜ Ղարաբաղը,— քլունգի պես խփեց Բենոն։

— Ղարաբաղում ապրողները Ղարաբաղը չեն քանդում, Ղարաբաղից փախչողներն են քանդում,— վրդովվեցի ես։

Այո՛, հետպատերազմյան տարիներին սկսվեց ղարաբաղցիների մասսայական հոսունությունը, մանավանդ դեպի Սումգայիթ, Մինգեչաուր նորակառույցները, հետո՝ դեպի Բաքու՝ քաղաքի արվարձանները։ Այդ քաղաքների բանվորական ուժը համալրվում էր ղարաբաղցիներով։ Իրենց արձակուրդներին նրանք գյուղ էին գալիս, վայելում Ղարաբաղի բարիքները։ Նրանց տեսնելով շարժվում է համագյուղացիների նախանձը։

— Ինչո՞ւ պիտի Պետրոսի տղան քաղաքում ապրի, իմը՝ ո՛չ,— գյուղացու հոգեբանությամբ ասում էր Պողոսը։

Այսպես, գյուղի արու զավակները, մեկը մյուսին թիկունք դարձած, հերթով տեղափոխվում են քաղաք, աշխատանքի անցնում, գոտեպնդվում։ Հետո՞։ Հետո գալիս են գյուղ, իրենց բերած աղջիկը առնում տանում և մշտական բնակություն հաստատում քաղաքում։

Ու այսպես՝ տարիներ շարունակ։

Ծնողները ծերանում են, մնում մենակ ու հոր են հասկանում իրենց սխալը։ Նրանք աղաչում են մոլորված զավակներին վերադառնալ գյուղ, շարունակել պապենական օջախի ծուխը, բայց իզուր...

— Ուշ է, երեխաները ռուսական դպրոցում են սովորում, վերադառնամ գյուղ ի՞նչ պիտի անեմ,— բացատրում են խաբված որդիները։

«Գյուղում ինչ պիտի անեմ», կարծես նրանք քաղաքում մի այնպիսի մասնագիտություն են սովորել, որ գյուղում չեն կարող աշխատել։ Հարցնող լինի՝ բանվոր մարդ ես, գյուղում աշխատած՝ քաղաքում, մե՞կ չէ։ Դեռ գյուղն ունի իր առավելությունները՝ մաքուր, կենարար օդը զուլալ աղբյուրների ջուրը, բնության հարուստ բարիքները և ամենագլխավորը, որ վառ կպահես քո պապենական օջախը, ծեր սրբացած գերեզմանները։

— Երեխաներս ռուսական կրթություն են ստանում, գյուղում ի՞նչ պիտի անեն,— նորից պատճառաբանություն։

Քաղաքում ձեր երեխաներն էլ ձեզ՝ բանվորների փոխարինողներն են, մի՞թե դա ճշմարտություն չէ։ Այո, նրանց երեխաների 99-ը տոկոսը ընտրում են իրենց հայրերի ճանապարհը։ Նրանց համար ուրիշ ճանապարհ չկա։

Բայց հետաքրքիր է, ո՞ւր մնաց ղարաբաղցու ինքնասիրությունը, ազգային հպարտությունը... Չէ՞ որ նրանք իրենց աղավաղված ազգանունով և անձնագրով են հիշեցնում, որ հայ են։ Ինչպիսի՜ դժբախտություն, ինչպիսի՜ մոլորվածություն...

Եվ այդպես, գյուղից փախածները հերթով գալիս են գյուղ, վախենված ծնողներին հողին հանձնում և ընդմիշտ կտրում կապերը իրենց պապենական օջախի հետ։ Տարիները գլորվում են, անցնում, նրանք մոռանում են և հայրենի գյուղը, և ծնողների գերեզմանները։

... Հիսնական թվականներին, երբ սովորում էի Երևանում, այստեղ Ղարաբաղից ընդամենը հինգ ընտանիք էր բնակվում։ Այսօր Երևանում ավելի շատ ղարաբաղցիներ են բնակվում, քան բուն Ղարաբաղում։ Այդ ինչպե՞ս եղավ։ Մի՞թե նրանց համար Ղարաբաղում աշխատանք չկար, ապրելու պայմաններ չկային։ Խոսք չունեմ, Երևանում շատ ղարաբաղցիներ կան, որոնք իրենց գիտելիքներով, արժանիքներով ու մասնագիտությամբ պետք է, որ գործեն մայրաքաղաքում։ Իսկ ղարաբաղցի այն շինարարը, ծեփողը կամ հենց այն շարքային ծառայո՞ղը... Մի՞թե Ղարաբաղը այդքան նեղ էր նրանց համար, մի՞թե այդ նույն աշխատանքը չի կարելի կատարել Ղարաբաղում, իրենց հայրական տուն-դռանը։

Չէ որ մենք միասին, միաձույլ կամքով կարող ենք շենացնել մեր Ղարաբաղը և ավելի լավ ապրել։

«Ղարաբաղը քանդում եք»։ Ղարաբաղը քանդում են նրանք, ովքեր լքել են իրենց հայրենի հողը, պապենական օջախները, երկար ուրիշներ վաստակելու համար չվել են հեռո՜ւ-հեռուներ... Միջին Ասիա, Հյուսիսային Կովկաս, օտար շատ ու շատ քաղաքներ։ Չվել են ու մոռացել իրենց հայրենիքը, իրենց ծնողներին, ապ ու պապերի գերեզմանները թողել փուշ ու տատասկի մեջ կորած։ Վաղուց կորել է այդ գերեզմանները տանող միակ արահետը։ Նույնիսկ մի շարք «խելոք» զավակներ էլ վաճառել են հայրական տունը, իրենց մանկության օրրանը։ Ամոթ նրանց։

Չվել են, գտել մի տաքուկ անկյուն։ Երբ մեկ-մեկ Ղարաբաղի մասին խոսք է լինում, կանգնում են մի խաչմերուկում ու հրացանի փողը ծռում դեպի մեզ. կրակում, հա՛ կրակում, որ մենք չենք կարողանում պահել Ղարաբաղը, գյուղերը քանդում ենք,. դպրոցները փակում, այգիները լավ չենք մշակում... Տեսեք-տեսեք հայրենասերներ են, մտածում են իրենց ծննդավայրի մասին։ Նրանց ձայնը տաք տեղից է դուրս գալիս։ Տղամարդ եք, եկեք միասին շենացնենք Ղարաբաղը։

Այո, մենք քիչ ենք մնացել Ղարաբաղում։ Մեր անելիքները շա՜տ են ու շա՜տ։ Պատահում է, այս փոքրությունից մեծ սխալներ են բույլ տալիս, հասկանում ենք այդ, բայց չենք կարողանում շրտկել, որովհետև քիչ ենք, չի հերիքում մեր ուժը, կարողությունները։

Ղարաբաղը պետք է պահենք միայն ու միայն մեր գոյությամբ, մեր շնչով, մեր աշխատանքով։

Այսօր ղարաբաղցին կանգնել է, իսկ երբ ղարա՛բաղցին կանգնում է, նա չի նստում մինչև...

Այս տարվա փետրվարյան օրերից սկսած վիրավոր գազանի պես մռնչում է ամբողջ Ղարաբաղը։ Պետք է տեսնել Արցախ աշխարհի կանանց, աղջիկներին, Անահիտի, Ռուզանի, Գայանեի հետնորդներին, իրենց լեռների պես կարծր ու ժեռ արու զավակներին, թե ինչպես են Արցախի գոյատևման համար պայքար տանում, իրենց բողոքի ու ցասման խոսքն ասում։

Դժբախտաբար վերևներում դեռ մեզ չեն հասկանում կամ հասկանում են, բայց սխալ մեկնաբանում...

Այս նյարդային լարված պայքարում մարդիկ կան չեն դիմանում և հուսահատորեն ասում են.

— Երե մեր պահանջը չկատարվեց, կթողնենք Ղարաբաղն ու կհեռանանք։

Այսինքն այն, ինչ ուզում են մեր պահանջի հակառակորդները։ Ոչ։ Երբեք։ Եթե, ասված մի արասցե, մեր պահանջը չկատարվի էլ, միևնույն է, պետք է մեր հողում ավելի ամուր կանգնենք, շատանա՜նք, շատանա՜նք... Խրախուսենք, որ վերադառնան արցախաշունչ մեր զավակները, մեր քույրերը և եղբայրները, որ մեզ թիկունք կանգնեն, ամրապնդենք, շենացնենք մեր Արցախ աշխարհը։

Լեռնային Ղարաբաղը ազատորեն կարող է տեղավորել ու իր բարիքներով կերակրել մեկ միլիոնից ավելի մարդ։ Ղարաբաղից դուրս մոտ մեկ միլիոն ղարաբաղցի է ապրում երկրի տարբեր վայրերում։

Ա՜խ, երե այսօր մեր մարզում ապրեր դրա թեկուզ և կեսը...

Անհատի պաշտամունքի և լճացման ժամանակաշրջանի հարվածից ուշքի է եկել ղարաբաղցին՝ նա այլևս չի թողնի իր մայր օրրանը, իր պապենական Արցախ աշխարհը։ Նրանք լավ գիտեն, ով թողնում է իր բույնը, ջնվում հեռուներ, ապա այդ բնին օտար հավքն է տիրում։

Արցախ աշխարհը սպասում է իր մոլորված, օտար երկնքի տակ ապրող զավակներին...

Վերադարձեք ձեր պապենական տունը, իմ հայրենակիցներ։

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Ստեփանակերտի քաղաքային սովետի կուլտուրայի բաժնի վարիչ, ՍՍՀՄ ժուռնալիստների միության անդամ